

այս թագաւորը գոյութիւն ունի Հայ ան-
ցեալին մէջ: «Արծիւը Արտաշէսեան հա-
րըստութեան գլխաւոր նշանն էր ինչպէս



Լուսնեցադարդ 1356ին գրուած ճաշոցէ մը
(Մատենադարան Ս. Ղազարու)

կ'երեւի Արտաւազդ Ա թոռան՝ Տիգրան
մեծի դրամներուն վրայ: Արտաշունիք ար-
ծիւը բարձրաստիճան գօրապետներու սա-
ղաւարտին վրայ՝ դրօշներու տէգին ծայրը
կը գետեղէին»¹:

Հայ քրիստոնէայ դարերուն արծիւը
պահեց իր դիրքը Հայոց մօտ: Հին աւե-
րակներու մէջ կը հանդիպինք արծիւին:

Հին Հայ պարիսպի մնացորդներ ունէին
արծիւ քանդակներ, Զուարթնոցի եկեղե-
ցւոյն աւերակաց մէջ փառաւոր խոյակներ
կան² արծիւի քանդակով: Հայ ձեռագրաց
մէջ արծիւը պահեց կամ շահեցաւ բարձր
դիրք մը, ընդհանրապէս Յովհաննէս ա-
ւետարանչին մանրանկարին հետ: Ասկէ
օրինակ մը ունինք 1197ին ծաղկուած և
գրուած Սկեռայ Աւետարանին մէջ³, Յով-
հաննու աւետարանին սկիզբը խորանին
վրայ: Դարձեալ քրիստոնէութեան շրջա-
նին «Արծիւը Բագրատունեաց հարստու-
թեան տոհմային նշանն է, և կ'երեւի յա-
ճախ եկեղեցիներու և պալատներու որ-
մերուն վրայ»⁴: Արծրունեաց տոհմն ալ
կ'երեւար թէ իր անունը ստացած էր
Արծիւէն:

Եւ սակայն ամէն պարագայի տակ Ար-
ծիւը ի Հայս մուտ գտաւ Արշակունեաց
տոհմին հետ և Տիգրանի պապերուն օրով:
Արծիւին գոյութիւնը ի Հայս ասկէ աւելի
հին ըլլալուն կը տարակուսիմ: Յետոյ
արծիւը իբր ցանկալի կամ յաղթական
մուտ չգտաւ ի Հայս, այլ իբր թշնամի,
չսիրուած, ատուած նշան: Հեթանոսու-
թեան Ուրարտական շրջանին արծիւին
չենք հանդիպիր ի Հայաստան. ան Հայոց
կը ներկայացուի Հայ Պարթեւ թշնամու-
թեանց հետ: Հայք և Պարթեւք եղան
երկու երդուեալ թշնամիներ, պատերազ-
մեցան իրարու հետ անսպառ ոխակալու-
թեամբ մը, և Պարթեւաց նշանն էր ար-
ծիւը: Իսկ Արշակունիք որոնք Մովսէս
Խորենացի «Ի Պարթեւաց առաջ եկած է
համարում»⁵ հայացուցին արծիւը, նոյն
իսկ քրիստոնէացնելով եւ սրբայնելով
զայն:

Ըստ երեւոյթին առաջին անգամ Մեծն
Տիգրան յաղթելով Պարթեւներուն, այդ
յաղթանակը յաւերժացուց իր դրամներուն

1. Թէոդիկ, 1923. էջ 185. Օ. Գ. Գալուստեանի
գրութիւնը:

2. Տե՛ս աստ Բգմվպ. էջ 478:

3. «Հանդէս Ամօթեայ» 1930. էջ 222. նկար թիւ 11:

4. Թէոդիկ, 1923. էջ 186:

5. Պատմ. Հայոց, Պալասանեան. 1902. էջ 70: